1906

Մ. ԳՈՐԿԻ

ՎԱՂԱԽԱԿԱՆ ԼԵԳԵՆԴ

Դունայի ափին ապրում էր Փերին։
Հաճախ գետի մեջ լողանում էր նա։
Մի օր էլ անփույթ, անզգույշ Փերին
Ընկավ ձկնորսի ուռկանը ահա։
Սաստիկ վախեցան ձկնորսները խեղճ...
Նրանց հետ էր բայց Մարկո պատանին,
Գեղեցիկ Փերուն սեղմեց գըրկի մեջ,
Ու համբուրում էր, գըգվում սիրունին։
Փերին, մի ճըկուն ոստիկի նըման,
Խայտում էր գըրկում, ոլորվում, խաղում,
Մըտիկ էր տալի տըղի աչքերին
Ու մըտքի միջին բարակ ծիծաղում...
Փայփայեց Փերին տըղին ամբողջ օր,
Բայց հենց գիշերը հասավ մըթագին,
Հանկարծ չըքացավ, կորավ նորից նոր,
Ու սաստիկ տըխրեց Մարկոյի հոգին։
Գիշեր ու ցերեկ գետի ափերին
Շըրջում է Մարկոն, հոգոց է հանում,
Փնտրում է, կանչում. «Ո՞ւր է իմ Փերին...»
Կրկչում են ալիք — «Մենք չենք իմանում»։
— Օ՜, սառն ալիքներ, դուք խաբում եք ինձ,
Ինքներդ եք խաղում նրա հետ թաքուն.

Ճըշաց պատանին ու թրռավ ափից,
Թրռավ՝ գետի մեջ գըտնի իր Փերուն...
Դունայի ափին ապրում է Փերին
Ու, ինչպես առաջ, այժմ էլ լողանում,
Իսկ Մարկոն չըկա... Բայց նըրա մասին...
Բայց նըրա մասին գեթ երգ է մընում։

. . . . . .

Իսկ դուք ապրում եք աշխարհքի վրա
Ինչպես կույր, անսիրտ, չընչին սողուններ.
Ոչ ձեզնից հետո զըրույց կը մընա,
Եվ ոչ ձեր մասին երգ կասեն անմեռ։